ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.5/21771-2024

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ԴԱՎԻԹ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Առաքելյան,

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում առաջին ընթերցմամբ ընդունված «Մշակութային արժեքների արտահանման և ներմուծման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Կ-799-18.03.2024-ԳԿ-011/1) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները, լրամշակված նախագիծը, ամփոփաթերթը, ինչպես նաև նախագծում կատարված փոփոխությունների վերաբերյալ տեղեկանքը՝ գլխադասային հանձնաժողովում քննարկելու համար.

1. Նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասում «վերջակետը փոխարինել միջակետով» բառերի փոխարեն առաջարկում ենք լրացնել **«**«:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով» բառերով.**»** բառերը հաշվի առնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, ինչպես նաև Օրենքի այլ դրույթների հետ հակասություններից խուսափելու նպատակով առաջարկում ենք 1-ին հոդվածը լրացնել նոր 2-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ.

   «2) 7-րդ կետից հանել «արտահանման կամ» բառերը.»

Ըստ այդմ կետերի համարակալումը վերանայվել է:

2. 2-րդ հոդվածի 1-ին մասում՝ «վերջակետը փոխարինել միջակետով» բառերի փոխարեն առաջարկում ենք լրացնել **«**«:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով» բառերով.**»** բառերը՝ հաշվի առնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը:

3. 4-րդ հոդվածը առաջարկում ենք լրացնել նոր 1-ին մասով՝ հետևյալ բովանդակությամբ.

« 1) 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3) հաստատում է վերջին 50 տարում մահացած այն հեղինակների ցանկը, որոնց ստեղծագործությունները Հայաստանի Հանրապետությունից կարող են արտահանվել միայն մշակութային արժեքների արտահանման լիցենզիայի (եզրակացության) կամ ժամանակավոր արտահանման իրավունքի եզրակացության (թույլատրող փաստաթղթի) հիման վրա.». »

Նշված փոփոխությունը պայմանավորված է օրենքի այլ դրույթների հետ հակասություններից խուսափելու նպատակով:

Ըստ այդմ մասերի համարակալումը վերանայվել է:

Պաշտոնական ինկորպորացիան ապահովելու նպատակով՝

- 4-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ (լրամշակված 3-րդ) կետով լրացվող 5.1-ին կետի «տալու կարգը» բառերից հետո առաջարկում ենք լրացնել **«** » **»** նշանը, իսկ «6.2-րդ» կետից առաջ լրացնել ««» նշանը,
- 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում «(եզրակացություն)» բառերից հետո առաջարկում ենք լրացնել «»» նշանը:

4. 5-րդ հոդված՝

- Առաջարկում ենք 5-րդ հոդվածը լրացնել նոր 2-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ.

2) 4. 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3) կազմում է վերջին 50 տարում մահացած այն հեղինակների ցանկը, որոնց ստեղծագործությունները Հայաստանի Հանրապետությունից կարող են արտահանվել միայն մշակութային արժեքների արտահանման լիցենզիայի (եզրակացության) կամ ժամանակավոր արտահանման իրավունքի եզրակացության (թույլատրող փաստաթղթի) հիման վրա.».

Ըստ այդմ մասերի համարակալումը վերանայվել է:

- 2-րդ մասում՝ «44 - րդ կետով՝» բառերի փոխարեն լրացնել «4.4-րդ, 16-րդ և 17-րդ կետերով՝» բառերը,
- 5-րդ հոդվածով գործող օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել նոր 16-րդ և 17-րդ կետերով՝ հետևյալ բովանդակությամբ.

«16) հաստատում է ֆիզիկական անձանց կողմից առանց ներմուծման մաքսատուրքի և հարկերի վճարման անձնական օգտագործման ապրանքների ներմուծման նպատակով ապրանքների վերաբերյալ մշակութային փորձագիտական եզրակացությունը՝ համատեղ մաքսային գործի բնագավառի լիազոր պետական մարմնի հետ:

17) հաստատում է հազվագյուտ աղեղնավոր նվագարանների պետական հավաքածուի տրամադրման կարգը:»:

5. 7-րդ հոդվածով առաջարկվում է գործող օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերը շարադրել նոր խմբագրությամբ.

«Օրենքի 11-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3) առարկան համարվում է մշակութային արժեք, որը կարող է արտահանվել արտահանման լիցենզիայի (եզրակացության) հիման վրա.

4) առարկան համարվում է մշակութային արժեք, որը կարող է արտահանվել առանց արտահանման լիցենզիայի (եզրակացության) հիման վրա. ».

Ըստ այդմ մասերի համարակալումը վերանայվել է:

- Առաջարկում ենք 7-րդ հոդվածը լրացնել նոր 4-րդ մասով՝ գործող օրենքի 11-րդ հոդվածի 4-մասը շարադրելով նոր խմբագրությամբ.

«4) Օրենքի 11-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Մշակութային արժեքի արտահանման լիցենզիայի (եզրակացության) կամ ժամանակավոր արտահանման իրավունքի եզրակացություն (թույլատրող փաստաթուղթ) տրվում է հայտը ներկայացնելուց հետո՝ երկու օրվա ընթացքում, բացառությամբ սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված դեպքի:»:»

Նշված փոփոխությունը պայմանավորված է օրենքի այլ դրույթների հետ հակասություններից խուսափելու նպատակով:

6. Առաջարկում ենք նախագծի 7-րդ հոդվածից հետո լրացնել նոր 8-րդ հոդված՝ գործող Օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրելով հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 8. Օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված մշակութային արժեքների ժամանակավոր արտահանումը արտահանման լիցենզիայի (եզրակացության) հիման վրա թույլատրվում է Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքով մշակութային արժեքի ժամանակավոր արտահանման համար նախատեսված առավելագույն ժամկետով:»:»

Ըստ այդմ հոդվածների համարակալումը վերանայվել է:

Հարգանքով՝ **ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**